



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«04» 07 2019թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000051

Ձեռնարկողը՝

«Ագարակի ՀԷԿ» ԱԿ
Լոռու մարզ, Ագարակ համայնք

Գործունեությունը՝

Ագարակի դոլերիդային բազալտների հանքավայրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվեկտրություն
Լոռու մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝



Ա. Դննյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0000 51

«04» 07 2019թ.

Ագարակի դոլերիտային բազալտների հանքավայրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Պատվիրատու՝ <<Ագարակի ՀԷԿ>> ԱԿ
Ներկայացված նյութեր՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն և կից փաստաթղթեր
Գործունեության կատեգորիա՝ «Ա»
Տեղադրման վայրը՝ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնք

Ագարակի դոլերիտային բազալտների հանքավայրը վարչական տեսակետից գտնվում է Լոռու մարզի Ստեփանավանի տարածաշրջանում: Հանքավայրը բաղկացած է երկու տեղամասերից՝ <<Տեղամաս-1>> և <<Տեղամաս-2>>:

<<Տեղամաս-1>>-ը տեղակայված է Ագարակ գյուղից 0.3-0.5կմ արևելք, Մեծ-ձոր գետի կանիոնի աջ լանջին և զբաղեցնում է 1.14հա մակերես, գտնվում է 1315-1350մ բացարձակ բարձրությունների վրա:

<<Տեղամաս-2>>-ը տեղակայված է Ագարակ գյուղից 3.5կմ արևմուտք, Ուռուտ գետի կանիոնի ձախ լանջին (Լոռի Բերդ գյուղի դիմաց) և զբաղեցնում է 3.5հա մակերես, բացարձակ նիշերը տատանվում են 1355-1382մ սահմաններում:

Հանքավայրի ծայրակետային կոորդինատները ARM WGS համակարգով՝

1-ին տեղամաս	2-րդ տեղամաս
Y=8455817 X=4541998	Y=8450836 X=4542483
Y=8455954 X=4541966	Y=8450836 X=4542508
Y=8455940 X=4541902	Y=8450952 X=4542642
Y=8455914 X=4541826	Y=8451123 X=4542566
Y=8455900 X=4541830	Y=8451047 X=4542377
Y=8455845 X=4541893	Y=8450978 X=4542467
	Y=8450920 X=4542489

Լոռու մարզի Ագարակի դոլերիտային բազալտների հանքավայրի պաշարները հաստատվել են բնապահպանության նախարարության աշխատակազմի օգտակար հանածոների պաշարների գործակալության խորհրդի Պետական ընդերքարանձակային փորձաքննության հանձնաժողովի կողմից 2003թ օգոստոսի 18-ի թիվ 18 Որոշմամբ, 2003թ.



հունիսի 1-ի դրությամբ, հետևյալ կարգերով և քանակով՝ 165.5 հազ. խմ B կարգով /Տեղամաս - 1/ և 565.8 հազ. խմ X1 կարգով /Տեղամաս - 2/, ընդամենը՝ 731.3 հազ. խմ:

Բլոկների ելքն ընդունվել է 1-ին տեղամաս՝ 40.0%, 2-րդ տեղամաս՝ 45%:

Հանքավայրի բազալտները իրենց քիմիական կազմով և ֆիզիկամեխանիկական հատկություններով համապատասխանում են "Блоки из горных пород для производства облицовочных, архитектурно-строительных, мемориальных и других изделий" 9479-98 ԳՈՍՏ-ի և «Շինարարական քարեր տուֆերից, բազալտներից և տրավերտիններից» 100-95 ՀՍ-ի և կարող են օգտագործվել բլոկների և շինարարական քարի արտադրության համար: Արդյունահանման արդյունքում առաջացած թափոնները համապատասխանում է «Խիճ և կոպիճ խիտ լեռնային ապարների» 8267-95 ԳՈՍՏ-ի և «Ավազ շինարարական աշխատանքների համար» 8736-95 ԳՈՍՏ-ի պահանջներին:

Բացահանքը նախկինում արդյունահանվել է՝ «Տեղամաս-1»-ից արդյունահանվել է 8906.5 խմ բազալտի մարվող պաշար, որի հետևանքով նրա վերջնական եզրագծի սահմանների մեջ ներառված զանգվածի հաշվեկշռային պաշարների քանակը կազմում է «Տեղամաս-1»-ում 156.6 հազ. խմ, B կարգով, 2-րդ տեղամասում՝ 565.8 հազ. խմ, X1 կարգով: Ընդամենը 722.4 հազ. խմ մարվող պաշար: Տարեկան արտադրողականությունը՝ 14448 խմ մարվող պաշար:

Լոռու մարզի Ագարակի բազալտների հանքավայրը նախկինում շահագործվել է 2003թ-ից, և «Տեղամաս-1»-ից ըստ 5-ՕՀՊՀ-ի տվյալների արդյունահանվել է 8906.5 խմ բազալտ:

Հանքավայրի ծառայման ժամկետն է 50 տարի:

Հանույթն իրականացվելու է հորատասեպային եղանակով: Բլոկների բարձունն իրականացվելու է ավտոկռունկի միջոցով:

Ելնելով հանքավայրի տեղադիրքից, հանքամարմնի տեղադրման պարամետրերից և մակաբացման ապարների փոքր ծավալներից, տեղամասի մշակումը նախատեսվում է բաց լեռնային աշխատանքներով: Բացահանքերն ունեն հետևյալ պարամետրերը.

- ամենամեծ երկարությունը՝ «Տեղամաս-1»՝ 145.0 մ, «Տեղամաս-2»՝ 252.0 մ,
- ամենամեծ լայնությունը՝ «Տեղամաս-1»՝ 142.0 մ, «Տեղամաս-2»՝ 204 մ,
- ամենամեծ խորությունը՝ «Տեղամաս-1»՝ 25.0 մ, «Տեղամաս-2»՝ 22.3 մ,

Բացահանքի բացումը կատարվելու է բացահանքի հյուսիս արևմտյան մասից Ստեփանավան Ալավերդի ավտոճանապարհը հատող, նախկին տարիներին արդյունահանման աշխատանքները կազմակերպելու համար կառուցված ավտոճանապարհից՝ 270 մ երկարությամբ, 8 մ լայնությամբ: Հաջորդ 1340.0 մ հորիզոնը ևս մշակվելու է այդ ավտոճանապարհից: Իսկ 1337.5 մ բարձրության հորիզոնը մշակվելու է բացահանքի հյուսիսային մասով նախատեսվող 365 մ երկարությամբ, 8 մ լայնությամբ ավտոճանապարհով, որից հետո 1335.0-1325.0 մ բարձրության հորիզոնները մշակվելու են այդ ավտոճանապարհից աստիճանաբար փոփոխելով երկարությունը:

Բացահանքը շահագործելիս առաջանում են կորուստներ՝ «Տեղամաս-1» բացահանքի կողերի բնամասերի կորուստները կկազմեն 16300 խմ (10.41%), իսկ «Տեղամաս-2» կորուստները կկազմեն 42100 խմ (7.44%):

Հանքավայրի մշակման համար ընտրված է ընդլայնական մեկ կողանի մշակման համակարգ:

Մակաբացման ապարները «Տեղամաս-1»-ում կազմում են 16604 խմ, որոնք բուլդոզերի օգնությամբ, տեղափոխվելու են մինչև 100 մ հեռավորությամբ բացահանքի արևմտյան մասում ձևավորվող N1 ժամանակավոր լցակույտ և պահեստավորվելու են: Շահագործման 15-րդ տարվանից սկսած N1 ժամանակավոր լցակույտի մակաբացման ապարները աստիճանաբար կտեղափոխվեն և կլցվեն «Տեղամաս-1»-ի արդեն արդյունահանված տարածք՝ 1.2 մ բարձրությամբ, և կհարթեցվեն: Կստեղծվեն ներքին լցակույտեր:



<<Տեղամաս-2>>-ում մակաբացման ապարների 34578խմ ծավալը տեղափոխվելու է N2 ժամանակավոր լցակայան և պահեստավորվելու է: <<Տեղամաս-2>>-ում մակաբացման ապարները նախ կտեղափոխվեն բացահանքի արևելյան հատվածը, իսկ հետո բացահանքի արևմտյան մասը: Բացահանքի հատակը՝ 1360.7մ նիշն արդյունահանելուց հետո N2 ժամանակավոր լցակայանում եղած մակաբացման ապարները կտեղափոխվեն և կլցվեն այդ արդյունահանված տարածքի վրա՝ ձևավորելով N3 լցակայան: Այնուհետև կարդյունահանվի նրա արևելյան հատվածը մինչև բացահանքի ամենացածր բարձրության նիշը՝ 1358.2մ: Մակաբացման ապարները շահագործման ավարտից հետո նախատեսվում է բուլդոզերով տեղափոխել բացահանքի բացված, արդյունահանված հանքաստիճանների ողջ մակերեսի վրա և հարթեցնել:

Հանույթից առաջացած թափոնները, որոնք իրենցից ներկայացնում են բազալտի կտորներ՝ <<Տեղամաս-1>>-ում՝ 84180խմ և <<Տեղամաս-2>>-ում՝ 288035խմ ծավալով բացահանքի շահագործման տարիներին բարձվելու են ավտոինքնաթիփերը և տեղափոխվելու գոյություն ունեցող ՋՏԿ խիճ ու ավազ ստանալու համար, որը գտնվում է հանքավայրից 0,5կմ հեռավորության վրա:

Միաքարի անջատումը զանգվածից նախատեսված է կատարել հորատասեսային եղանակով: Հորատասեսային աշխատանքների կիրառման ժամանակ նախատեսվում է սեպերի տեղադրում սեպանցքերի մեջ և հիդրավլիկ ճնշմամբ զանգվածի ճեղքում:

Ելնելով նախագծում ընդունված մշակման եղանակից, ինչպես նաև լեռնաերկրաբանական պայմաններից ընտրված է արտաքին բուլդոզերային լցակայանառաջացում:

<<Տեղամաս-1>>-ի և <<Տեղամաս-2>>-ում լցակայանի զբաղեցրած մակերեսները համապատասխանաբար կազմում են՝ 3160քմ և 6940քմ մակերես:

Քանի որ Տեղամաս-1-ում մակաբացման ապարները տեղափոխվել և փովել են շահագործմանը զուգահեռ, ուստի ռեկուլտիվացիայի ժամանակ միայն կհարթեցվի նրա ողջ մակերեսով՝ 11020քմ: Իսկ Տեղամաս-2-ում բացահանքի վրա լցված մակաբացման ապարները բուլդոզերով կտեղափոխվեն բացահանքի արևելյան մասը և կփովեն 1.2մ բարձրությամբ և կհարթեցվեն, ողջ մակերեսով՝ 29800քմ: Ընդհանուր հարթեցվող մակերեսներն են՝ բացահանքերի հատակը՝ 40820քմ մակերեսով, ավտոճանապարհները՝ 4960քմ, և արտադրական հրապարակը՝ 280քմ: Ընդամենը կկազմեն՝ 46060քմ: Հարթեցումը կատարվելու է բուլդոզերի օգնությամբ:

Ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման համար նախատեսված է 1824.9հազ << դրամ:

Հանքավայրի մատակարարումը տեխնիկական ջրով կատարվելու է փոշենստեցման, աշխատանքային հրապարակների, ճանապարհների և լցակայանների ջրման նպատակով: Ջուրը բերվելու է KO-002 մակնիշի ջրցան-վացող մեքենայով: Խմելու ջրի մատակարարումը կատարվելու է ջրի ցիստեռնով:

Հանքավայրի հիդրոերկրաբանական պայմանների համաձայն, գետնաջրերը բացակայում են: Հետևաբար բացահանքում ջրհեռացնող կառուցվածքներ չեն նախատեսվում:

Անմիջապես քարհանքի տարածքը թափվող անձրևային ջրերը հեռացվում են ինքնահոս կերպով և ներծծվում ճաքերի միջով:

Հանքավայրի հարակից տարածքում բնության հատուկ պահպանվող տարածքներ չկան:

Բացահանքի տարածքում << Կարմիր գրքում գրանցված բուսական և կենդանական տեսակներ չեն արձանագրվել, հանքավայրի տարածքում պատմության և զանկույթի նշարժ հուշարձաններ գրանցված չեն:



Ըստ նախագծային փաստաթղթերի նախատեսված են շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված միջոցառումներ:

Տեղամասի շահագործման ընթացքում իրականացվելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումներ.

- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, շաքաթական մեկ անգամ հաճախականությամբ,

- լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ՝ տարին մեկ անգամ հաճախականությամբ,

- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ տարին մեկ անգամ հաճախականությամբ:

Ջրային ավազանի աղտոտում տեղի չի ունենա, քանի որ տարածքում գրունտային ջրերը բացակայում են, իսկ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն կանխատեսվում:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Լոռու մարզի Լոռու Բերդ համայնքում իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են Շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները: Փորձաքննական գործընթացում կատարվել են ՇՄԱԳ հաշվետվության լրամշակումներ և հաշվի են առնվել ներկայացված առաջարկություններն ու դիտողությունները: Առկա է «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի դրական փորձաքննական եզրակացությունը:

Փորձաքննական պահանջներ

1. Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգ և արդյունքները ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով՝ ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ագարակի ՀԷԿ» ԱԿ-ի կողմից ներկայացված Լոռու մարզի Ագարակի դղերիտային բազալտների հանքավայրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխ. մասնագետ



Ձ. Զուռնայան